



«Հ. Բրյուսովի անվան պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտոր
Կ. Հարությունյան
«13» հոկտեմբեր 2022թ.

ԿԱՐԾԻՔ **առաջատար կազմակերպության**

Նարինե Ստեփանի Մելքոնյանի «Հայերենի հոլովական իմաստների համարժեքները իսպաներենում» թեմայով ատենախոսության մասին՝ ներկայացված բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար՝ Ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ:

Կարծիքն ընդունվել է ԲՊՀ-ի Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի 2022 թ-ի հոկտեմբերի 13-ի նիստում (արձանագրություն N2) բաց քվեարկությամբ: Նիստին մասնակցում էին բ.գ.դ., պրոֆեսոր Կ.Աբրահամյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Հ.Թովմասյանը, բ.գ.թ., դոցենտ Լ.Բադալյանը, բ.գ.թ., դոցենտ Հ.Հակոբջանյանը, բ.գ.թ., դոցենտ Կ.Վեյսանը, բ.գ.թ., դոցենտ Լ.Մովսեսյանը, բ.գ.թ., դոցենտ Ա.Գյուրջայանցը, բ.գ.թ., դոցենտ Է.Գալստյանը, բ.գ.թ. Ա.Այվազյանը:

Ցանկացած լեզվական երևույթի հետազոտությունն էլ ավելի է արժևորվում, եթե այն ուսումնասիրվում է զուգահեռության լույսի ներքո, երբ հետազոտողի նպատակն է վեր հանել լեզվական զուգամետ և տարամետ առանձնահատկությունները: Նման ուսումնասիրությունների շարքին կարելի է դասել սույն ատենախոսությունը, որը նվիրված է հայերենի հոլովական իմաստների արտահայտմանը ժամանակակից իսպաներենում: Զուգահեռական բնույթի նմանատիպ ուսումնասիրությունները գիտական արժեք են ներկայացնում ոչ միայն այն պատճառով, որ հնարավորություն են տալիս բացահայտելու օտար լեզվի, տվյալ դեպքում՝ իսպաներենի, այլև մայրենի լեզվի առանձնահատկությունները, այդ թվում նաև մշակութային իմաստները, որը կարևոր ներդրում է թարգմանաբանության ոլորտում ևս: Վերջին հանգամանքը, անշուշտ, ապահովում է սույն աշխատանքի գործնական արժեքը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Աշխատանքի առաջին գլխում, որը կազմված է երկու ենթագլխից, հանգամանորեն վերլուծվում են հոլովի՝ որպես ձևաբանական հիմնական կարգերից մեկի վերաբերյալ տարբեր լեզվաբանական տեսություններ և առանձին լեզվաբանների կարծիքներ: Մասնավորապես՝ առանձին-առանձին քննվում են Օ. Ջեսպերսենի, Լ. Ելմսլի, Ռ. Յակոբսոնի, Չ. Ֆիլմորի, Ս. Կացնելսոնի և այլոց կողմից առաջ քաշված տեսությունները և մոտեցումները, վեր են հանվում վերջիններիս միջև զուգամետությունները և տարամետությունները: Նույն գլխի շրջանակներում քննարկվում է նաև հայերենի հոլովների քանակի հիմնահարցը, այն է՝ հայերենագիտության մեջ մինչ օրս առաջարկված երեք տեսությունները, համաձայն որոնց՝ հայերենում պետք է առանձնացնել հինգ, վեց և յոթ հոլով: Հարկ է նշել, որ սույն գլխի շրջանակներում ատենախոսն, անկասկած, ցուցաբերում է ժամանակակից տեսությունների իմացություն և դրանք համադրելու կարողություն:

Աշխատանքի երկրորդ գլուխը լուսաբանում է հայերենի և իսպաներենի հոլովական և կապական համակարգերը, դրանց վերաբերյալ տարբեր լեզվաբանների տեսակետները: Բաղկացած լինելով երեք ենթագլխից՝ աշխատանքի սույն գլուխը առանձին-առանձին անդրադառնում է հոլովի՝ որպես ձևաբանական հիմնական կարգի քերականական իմաստի հիմնահարցին, հոլովի համարժեք գործառույթ կատարող կապական կապակցությունների առանձնահատկություններին և հոլովական իմաստների արտահայտչամիջոցներին իսպաներենում: Մանրամասն ներկայացվում են ժամանակակից իսպաներենի տարբեր հոլովական իմաստներ արտահայտող նախդրավոր արտահայտությունները, դրանց հիմքում ընկած նախդիրները և վերջիններիս իմաստային առանձնահատկությունները: Իսպաներենում տարբեր հոլովական իմաստներ արտահայտող նախդրավոր արտահայտությունների քննարկումն ուղեկցվում է հայերեն թարգմանված տարբերակներով, որոնց շնորհիվ երևում են երկու լեզուների միջև ձևաբանական տարբերությունները:

Աշխատանքի երրորդ գլուխը ներկայացնում է հայերենի հոլովները և նրանց համարժեք ձևերն իսպաներենում: Առանձին ենթագլուխներում մանրակրկիտ վերլուծության են ենթարկվում հայերենի յոթ հոլովներով, ինչպես նաև հոլովով և կապերով արտահայտվող իմաստները: Սրա հիման վրա դուրս են բերվում ուսումնասիրվող լեզուների միջև դիտարկելի զուգամետությունները և տարամետությունները: Վերջիններս առավել տեսանելի են դառնում յուրաքանչյուր ենթագլխի վերլուծության արդյունքներն ամփոփող աղյուսակների տեսքով:

Գնահատելով սույն ատենախոսության տեսական և գործնական արժեքը՝ հարկ ենք համարում անդրադառնալ նաև որոշ թերությունների:

1. Աշխատանքում երբեմն հանդիպում են անհաջող ձևակերպումներ, որոնք թերևս թարգմանության խնդիրներ են, ինչպես օրինակ՝ «սուբյեկտայնություն – օբյեկտայնություն» (էջ 21), «հոլովական հարաբերության արտահայտում որոշակի լեզվում՝ անկախ տեխնիկական միջոցներից» (էջ 22), «Ջ.Գրինբերգը


հոլովների հարցին մոտենում է քանակական դիրքերից» (էջ 24), «նորմատիվ գրականություն» (էջ 44), «նախատիպային ստացականություն» (posesión prototípica) (էջ 73), «տիրապետում» (dominio) (էջ 73), «վերացական սերում» (էջ 77), «մարդկային գործողություն» (էջ 77), «հաղորդակցական տեղեկատվություն» (էջ 79) և այլն:

2. Ցանկալի կլիներ, որ հայերենի հոլովները և նրանց իսպաներեն համարժեքները քննվեին գեղարվեստական գրականության, ինչպես նաև դրանց թարգմանությունների նյութի հիման վրա, քանի որ գեղարվեստական գրականությունը տրամադրում է հարուստ և բազմազան նյութ տարատեսակ լեզվական երևույթներ ուսումնասիրելու համար:
3. Ամփոփելով առաջին գլխի երկրորդ՝ «Հոլովական իմաստի և հայերենի հոլովների քանակի մեկնաբանումը հայ լեզվաբանության մեջ» ենթագլուխը՝ ատենախոսը, թեև հղում է անում Ա. Մարգարյանի՝ տարբեր քանակներով հոլովների արժեքավոր տեսությանը, այնուամենայնիվ չի արտահայտում իր սեփական դիրքորոշումը այս հարցի վերաբերյալ (էջ 31-32): Ցանկալի կլիներ իմանալ ատենախոսի մոտեցումը հայերենի հոլովների քանակի առանձնացման վերաբերյալ:
4. Որոշակի տարակուսանք է առաջացնում երկրորդ գլխի վերնագիրը, այն է՝ «Հոլովական ու կապական համակարգերը ժամանակակից հայերենում և դրանց համարժեք կառույցներն իսպաներենում», որից կարելի է ենթադրել, որ քննության առարկա են դառնում հենց հայերենի կապական համակարգերը, և ինչպես են դրանք արտահայտվում իսպաներենում: Սակայն ատենախոսության մեջ կապական համակարգերը երկու լեզուներում քննվում են առանձին-առանձին: Կցանկանայինք ստանալ ատենախոսի պարզաբանումը այս հարցի վերաբերյալ:
5. Եզրակացությունը բավականին ծավալուն է (23 էջ)՝ տեսական բնույթի ընդհանուր դրույթներով և հիմնական եզրահանգումների կրկնությամբ: Աշխատանքը կշահեր, եթե եզրակացությունում ներառված աղյուսակները (էջ 159, 162, 170), ներկայացվեին հավելվածում, իսկ դրանց քանակական տվյալներն եզրակացությունում լուսաբանվեին տեքստային տարբերակով:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ վերոնշյալ դիտողությունները հայեցակարգային չեն և թույլ են տալիս եզրակացնել, որ Նարինե Ստեփանի Մելքոնյանն արժանի է իր հայցած Ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանին:

Նշենք նաև, որ ատենախոսության սեղմագրում արտացոլված են ատենախոսության մեջ ներկայացված վերլուծության արդյունքերը և եզրակացությունները, իսկ ատենախոսության հիմնական դրույթները համապատասխանաբար արտացոլված են հրապարակումներում: Հետևաբար, միջնորդում ենք ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի գիտական աստիճաններ շնորհող 009 մասնագիտական խորհրդին Հայերենի հոլովական իմաստների համարժեքները իսպաներենում» թեմայով ատենախոսության համար Նարինե Ստեփանի Մելքոնյանին շնորհելու Ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ԲՊՀ-ի Լեզվաբանության և հաղորդակցման
տեսության ամբիոնի վարիչ՝



բ.գ.թ., դոցենտ Լ.Բաղայան

Հաստատում եմ Լ. Բաղայանի տնօրհանությունը:

ԲՊՀ-ի գիտքարտուղար՝



Հ. Փիլավջյան